

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1879 ԱՄԻՆ

Ն Ի Ս Տ Ժ Գ

2 ՆՈՅԵՄԲԵՐ 1879



Կ. ՊՕԼԵՍ

1879

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ա. ՊԱՐՈՆԵԱՆ, Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

11 Գույմ-Գաբու, Պատրիարքարանի փողոց 11

ԴԻԻԱՆՔ ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Ստեփան փաշա Ասլանեան	Ա. Ա. Բեհապուր
Տիգրան էֆէնտի Եուսուֆեան	Բ. »
Յարութիւն էֆէնտի Մէրեքմ-Գուլի	Գ. »
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան	Ա. Ա. Բեհապուր
Գասպար էֆէնտի Չէրազ	Բ. »
Գարեգին էֆէնտի Մելիքեան	Գ. »

Չեռնասուրբեան դիւան

Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ
Հովհաննէս Բահանա Մկրեան
Տիգրան էֆէնտի Եուսուֆեան

Գաստիալուրբեան դիւան

Սերվիչէն էֆէնտի Ա. Բեհապուր
Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան
Գասպար էֆէնտի Չէրազ

Կարուածոց դիւան

Մինաս էֆէնտի Գափամաճեան
Յովհաննէս էֆէնտի Կրճիկեան
Արիկ էֆէնտի Ռւնճեան Ա. Բեհապուր

Համարակալուրբեան դիւան

Ստեփան էֆէնտի Փափազեան
Քրիստոստուր էֆ. Ղազարոսեան Ա. Բեհապուր
Համբարձում էֆէնտի Մազպուլեան

Ելմտական յանձնախումբ

Քրիստոստուր էֆէնտի Ղազարոսեան
Ղազար էֆէնտի Հովուեան

Սարգիս էֆէնտի Գալուքճեան
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան

Յարաբերութեան դիւան

Մկրտիչ էֆէնտի Էսաեան
Բարսեղ էֆէնտի Հալաճեան
Պօղոս էֆէնտի Պառնասեան

Իրասուրբեան դիւան

Ներսէս վարդապետ Ասլանեան
Առաքել էֆէնտի Ալթուն-Տիւրքի
Նշան էֆէնտի Օտեան

Նախաձեռնութեան դիւան

Տարթու Ռափա էլեան էֆէնտի
Յարութիւն էֆ. Մէրեքմ-Գուլի Ա. Բեհապուր
Միհրան էֆէնտի Չօպանեան

Խմբագրութեան դիւան

Կարապետ էֆ. Իւթիւճեան Ա. Բեհապուր
Գարեգին էֆէնտի Մելիքեան
Համբարձում էֆէնտի Ալաճաճեան

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ժ Ո Ղ Ս Վ

ԲԱՅՈՐՄ 1879 ԱՄԵՆ

Ն Ի Ս Տ Ժ Գ

2 ՆՈՅՆՄԲԵՐ 1879

ՆԱԽԱԳԱՀ. — Ամեն Տ. Ներսէս Սրբազան Պատրիարք

ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան էֆէնտի Եուսուֆեան

ԱՋԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՔ

ԿԵՐՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՔ

Ա. Վիճակ

- 1 Կարապետ Եպս. Սերոբեան Բ
- 2 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ
- 3 Սիմոն Եպս. Սէֆէրեան
- 4 Կարապետ Ք. Սէթեան

Բ. Վիճակ

- 5 Մտթէոս Եպս. Իզմիրլեան
- 6 Պօղոս Վ. Խօլտամեան
- 7 Յովհաննէս Ք. Մկրեան Բ
- 8 Գրիգոր » Աճէմեան Բ

Գ. Վիճակ

- 9 Վահան Վ. Տ. Մինասեան Բ
- 10 Յակոբ » Ա. Փափազեան
- 11 Սահակ Ք. Տ. Սարգսեան Բ
- 12 Խորէն » Փէշիվանեան

Դ. Վիճակ

- 13 Ներսէս Վ. Ասլանեան Բ
- 14 Սուքրիա Ք. Ստեփանեան
- 15 Յարութիւն Սերոբեան
- 16 Վրթանէս » Պալեան Բ

Ե. Վիճակ

- 17 Խորէն Արք. Նար Պէյ Բ
- 18 Յովհաննէս Վ. Փափազեան Բ
- 19 Գարեգին » Թաթարեան Բ
- 20

- Բ. Բացակայութիւն առաջին
- Բ. 2 Բացակայութիւն երկրորդ
- Բ. 3 Բացակայ բանաւոր պատճառ

ԱՄԵՐՈՒՄ

(Ա. Վիճակ)
Գումգաբու, Կետիկ փաշա
Եւ Գումգաբուի դուրս

- 21 Գրիգոր Պէրպէրեան Բ
- 22 Գլորգ Ստիմարաճեան Բ
- 23 Թաշիկ Մանկասարեան Բ
- 24 Կարապետ Ազարդաճեան Բ
- 25 Համբարձում Մազպուլեան
- 26 Մինաս Գափամաճեան
- 27 Յովհաննէս Պոյաճեան Բ
- 28 Ն. Մէղպուրեան Տօրթօր Բ
- 29 Պօղոս Պառնասեան
- 30 Սարգիս Ազարէկեան Բ
- 31 Սահակ Ապրո
- 32 Անեքերիմ Մանուկեան Բ
- 33 Բարթոլոմէոս Քիւրքճիպաշեան Բ
- 34 Ատովմ Տէրպէյն
- 35 Գէորգ Ազատլաճեան
- 36 Յ. Մէրեքմ-Գուլի
- 37 Աւետիս Կիրտազեան Բ

(Բ. Վիճակ)

Պէշիկբաշ

- 38 Անդրանիկ Կրճիկեան
- 39 Ալիքսան Խօրատանճեան Բ
- 40 Բարսեղ Հալաճեան Բ
- Եկեմիզաբու

- 41 Մկրտիչ Քիւրքճիպաշեան
- 42 Սեպուհ Մազսուտեան Բ
- 43
- 44

Իւսկիւտա Ս. Խաչ

- 45 Սիմոն Ֆէլիկեան
- 46 Ստեփան Ասլանեան Բ

47 Յ. Նիշմանեան Տօրթօր Բ

48 Իւսկիւտա Ս. Կարապետ

- 49 Միհրան Պահճէղափուլեան Բ
- 50 Պօղոս Թորգոմեան Բ
- 51 Նիկողոս Ալաճաճեան Բ
- 52 Տրդատ Փափազեան Բ

(Գ. Վիճակ)
Գասըմ բաշա

53 Գասպար Չէրազ
Բէա

- 54 Արիկ Ռւնճեան Բ
- 55 Գրիգոր Սէլիմիճեան Բ
- 56 Գրիգոր Օտեան Բ
- 57 Սերվիչէն

- 58 Ռափայէլեան Տօրթօր Բ
- 59 Միքայէլ Մօմճեան Բ
- 60 Կրապետ Քաղազեան Բ
- 61
- 62

Միջագիւղ

- 63 Յակոբ Նորատուհեան Բ
- 64 Տիգրան Եուսուֆեան
- 65 Մկրտիչ Գազանճեան Բ
- 66 Աւետիս Գօլօլեան Բ
- 67 Նշան Օտեան Բ

Պէյգօզ Եւ Ղալափիս
68 Միքայէլ Մամիկոնեան Բ
(Դ. Վիճակ)

- Ղուզղուճուգ Եւ Իմաթիե
- 69 Յովհաննէս Էսաեան Բ
- 70 Ստեփան Պէշիկեան Բ

Գատրգլխի	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
71 Կարապետ Շահպաղեան	Բ 2	121 Ստեփան փոխադրեան
72 Մկրտիչ Մուրատեան	Բ 2	Տիվրիկ
Նալբգաբու		122 Նշան Գարագաշ
73 Յակոբ Եղմէնիճեան	Բ 2	Զեյթուն Եւ Մուշ
Եկեղիմասայի Սամարիոյ	101 Սիմոն Մազսուտեան	123
74 Պօղոս Մկրտիչեան	Բ 2	Տրապիզօն
Թօփգալիու	Քեօբաճեա	124 Տիգրան Տ. Ներսէսեան
75 Յովհաննէս Մարգարեան	102 Մ. փոխադրեան Տօթթօր	Բ 2
Էյուսպ Ս. Եղիա Եւ Ս. Աստուածածին	Անդրխանուպօլիս	125 Մելքօն Իսկէնտէրեան
76 Գարեգին Յ. Մէլիքեան	103 Վիչէն Ապաուլլաս	Բ 2
Գոնուչէլմէ	Նիկոմիդիա	126 Միհրան Զօպանեան
77 Ասափա Իկիտպաշեան	104 Կ. Ս. Իւթիւճեան	Վան
Հիսա Եւ Պօլաճի գիւղ	Ակն	127
78 Յովհաննէս Արշակունի	105 Աւետիս Պարոնեան	Աղբամար
Նոր գիւղ Եւ Սրէիա	Ղարաճիսար	128
79 Ղազար Հովուեան	106	Հայեպ Եւ Այնթապ
Պալատ	Արաբկեր	129
80 Մկրտիչ Գ. Էսաեան	107 Կարապետ Խաչիկեան	Սեբաստիա
81 Յովհաննէս Կրճիկեան	Բաղէշ	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
82 Տելեմաք Էնքսէրճեան	108	Ռուսճուխ
Քարակեօճրիկ	Պրուսա	131
83 Սեպուհ թիւրապեան	109 Քրիստոստուր Ղազարոսեան	Կարս
84	Եւրոկիա	132 Արբաճամ Յ. Այվազեան
(Ե. Վիճակ)	110	Զմշկածագ
Սամարիա	Ամասիա	133 Համբարձում Սարըբէշիշեան
75 Ալիքսան Պէշիքեան	111 Համբարձում Ալաճաճեան	Գաղատիա
88 Եղիազար Մէլիքեան	Բալու	134
86 Մինաս Ճաֆճաֆեան	112 Յովհաննէս Ազնաւորեան	Ատանա
88 Նազարէթ Շահպաղեան	Եղեսիա	135
89 Յարութիւն Թիւլեան	113 Յակոբ Իւթիւճեան	Սըղերդ
90 Յակոբ Արշակ	Մանճըլիս	136 Մատթէոս Ալէքսան
91	114	Եօզղատ
92	Հաճըն	137 Լօղօֆէթ Պալեօղեան
93	115	Մալաբիա
94	Երզնկա	138 Գէորդ Վարդանեան
Խաղիւղ	116 Ռէթէոս Պէրպէրեան	Բ 2
95 Առաքել Ալթուն Տիւրրի	Թէրիբտաղ	139 Պապի Պապօեան
96 Ռէթէոս Պէլիկեան	117 Տիգրան Գ. Սինանեան	Եգիպտոս
97 Սարգիս Արբաճամեան	Կեսարիա	140
98 Մ. Արծրունի Տօթթօր	118 Գէորդ Գըրճեան	
99 Սարգիս Քալուքճեան	Խարբերդ	
100 Աթանազիոն Արապեան	119	
	Պալքբէսեր	
	2120	

Օ Ր Ե Կ Ե Ր Գ

Ա. Խնդիր Ղալաթիոյ թաղեցւոց . — Վիճարանութիւն ի վերայ տեղեկագրի Մայր դիւանի :

Բ. Տեղեկագիր Մայր դիւանի . — Վիճարանութիւն ի վերայ 57 անլոյծ խնդրոց :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԲ

Ընդ նախագահութեամբ Ամենապատիւ Տ. Ներսէս Սրբազան Պատրիարք Հօր՝ եւ ատենապետութեամբ Տիգրան Էֆէնտի Եւսուֆեան Ատեանը բացուեցաւ ժամ 8 1/2 ին . ի ներկայութեան 36 Երեսփոխանաց , որոց թիւը 43 ի յանդեցաւ ի վերջէ :

8

Վաւերացումն ԺԱ. նիստի ատենագրութեան

Ատենապետ Էֆէնտին ի դիտողութիւն չրաւիրեց զԵրեսփոխանս ԺԱ. նիստի ատենագրութեան վրայ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ . — Երես 261 , սիւնակ Բ. խօսքիս 6 թղ. տողին սարբերութենէն սկսեալ մինչեւ 10 թղ. տողն , ուր նոր հատուածը կսկսի , պիտի լինի այսպէս :

« այլ յօդուածին ներքեւ իբրեւ բացատրութիւն այդ մանրամասնութիւնները յիշատակեց , զորս վայելելու համար , պարտաւոր պիտի լինի ամեն ազգային անհատ հատուցանել իւր պարտքը , եւ եթէ ժողովը կամի կրնայ այդ մանրամասնութիւնները յօդուածին կցորդել , ապազային մէջ այլ ընդ այլոյ մեկնութեանց տեղի չտալու համար : »

Երես 263 , սիւնակ Ա. արձանագրեալ է Համարակալութեան դիւանին կողմէ բարեփոխեալ տրոց կանոնադրին 11 թղ. յօդուածին քուէարկուիլն եւ ընդունուիլը : Ժողովը նոյն յօդուածը քուէարկած է Համարակալութեան

դիւանին՝ բերած բացատրութիւնն յօդուածին հետ լծորդելով, որով նոյն յօդուածին խըմ բազրութիւնն սա ձեւն առած է :

« Եւմտական տարւոյն մէջ իւր տուրքը չվճարող անհատն որ եւ է պարագայի մէջ իւր ազգային իրաւունքն, այն է առուծախի եւ ճանապարհորդութեան համար խնդրուած ծանուցազիրները, նշանտուութեան, երգման, եւ այլ եւ այլ վաւերացմանց, քուէ տալու, այլ եւ այլ բողոքի, եւ խնդրագրի գործողութիւնները վայելելու համար պարտի իւր յապաղեալ տրոց գումարը վճարել նախապէս » :

Երես 267, սիւնակ Բ. երբ Սրբազան Նախագահը հարցուց թէ վանքերը մուգաթայի տուրք չախտի տան, ըսի թէ այն վանքերն որ հովուութեան թեմ չունին, պարտաւոր են ըստ առաջնոյն իրենց սովորական մուգաթան վճարել :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Տրոց կանոնադրին մասնաւոր տրամադրութիւններն երբ քուէի կը դրուէին խօսք խնդրեցի ջրելու համար՝ ֆախագեան էֆէնտիի գիտողութիւնները, բայց Ատենապետ փաշան չտուաւ զայն, եւ այն ատեն՝ այս պարագան արձանագրեցէք ըսի Դիւանին, բայց կը տեսնեմ որ չէ յիշատակուած :

Ուրիշ գիտողութիւն տեղի չունենար, եւ հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ ժՍ, նիստի ատենագրութիւնն, եւ ժողովն եղած գիտողութիւններով հանդերձ ընդունելով կը վճարուի զայն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը մնայ այժմ վերջին ժ.Ֆ. նիստին ատենագրութիւնն, որ խըմբադրեալ պատրաստ է. բայց չէ կրցած սպազրութիւնն աւարտիլ. եթէ կը հաճիք, ըստ կանոնի ձեռագիրը կը կարգանք յատենի :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Քանի անգամ է որ այս յետաձգումը կը պատահի, միթէ կարելի չէ երկու ատենագրութիւն միանգամայն սպազրել եւ ժողովոյ նիստին հասցնել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Անշուշտ կարելի է, միայն թէ ժողովին գումարումը քանի մ'որ պէտք է յետաձգել եւ ժամանակ թողուլ արպազրութեան :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես այնպէս համոզուած եմ որ Ատենապետը էֆէնտին կարող է երկու ատենագրութիւն միանգամայն հասցնել, բայց կերելի թէ ուրիշ պատճառ մ'արդեւք մը կայ, կը խնդրեմ որ այս մասին բացատրութիւն մը հաճի տալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրիշ որ եւ է պատճառ չկայ, կը հաւատում ձեզ որ թէ Ատենապետը էֆէնտին եւ թէ ժողովոյս Դիւանագրութիւնը մեծ փոյթ ունին ատենագրութեան կանոնաւոր խմբագրութեան եւ սպազրութեանը համար, բայց ըստ որում միանգամ արտաքոյ կարգի պատճառով մը նիստի մ'ատենագրութիւնը չէ կրցած ժամանակին սպազրուիլ, եւ յաջորդը վրայ հասեր է, տպարանն չկարենալով երկու ատենագրութիւն միանգամայն հասցնել, իւրաքանչիւր նիստի՝ նախորդին ատենագրութիւնը կը մնայ անտիպ, սակայն կը յոսամ որ յառաջիկայ նիստին՝ սպազրեալ կուսենանք մեր առջեւ երկուքը միանգամայն : Այժմ եթէ կը հաճիք կը կարգանք ձեռագիրը, եթէ ոչ կը վերապահենք յառաջիկայ նիստին :

Ժողովը Ատենապետ էֆէնտիի բացատրութեանց վրայ ժ.Ֆ. նիստի ատենագրութեան վաւերացումը սպազրութեանն ետքի կը վճարուի :

2.

Բացակայութիւն երեսփոխանաց

Երեսփոխաններէն

- 1. Տ. Սահակ քնյ. Տ. Սարգսեան
- 2. Տրդատ էֆէնտի ֆախագեան

զրով ծանուցած լինելով թէ անձնական տրկարութեան պատճառաւ ստիպուած են այսօրեայ նիստին բացակայ մնալ, Ատենապետ էֆէնտին անոնց անունը կը յիշատակէ, եւ բացակայութիւնն իրր օրինաւոր՝ արձանագրով

րել կուտայ ներկայութեան տուժարին մէջ :

3.

Համարակալութեան դիւանի դիտողութիւնը երեսփոխան Ռ. Պերպերեան էֆէնտիի առաջարկութեան մասին

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը յիշէք որ Պերպերեան էֆէնտին ժողովոյս հոկտեմբեր 5ի նիստին մէջ ազգային ընդհանուր տրոց կանոնագրին մէջ յաւելցնելու համար յօդուած մ'առաջարկած էր, որ կը պահանջէր ազգային ընդհանուր տրոց հետ թաղական տուրքն հաւաքող Թաղ. խորհուրդները պարտաւորել որ իրենց թաղին մէջ մէն մի նախակրթարան բանան եւ ճրիւփարթ դաստիարակներ թաղեցի մանկոտն : Սոյն առաջարկն որ Համարակալութեան դիւանին յղուած էր, այս անգամ նոյն Դիւանին կողմէ կը վերագառնայ ժողովիս, որու վրայ նշանակուած կը տեսնենք սա դիտողութիւնը : « Դիւանը կը կարծէ թէ իրեն չվերաբերիր սոյն առաջարկը քննել » :

Սակայն հարկ է տեղեկանալ Համարակալութեան դիւանէն թէ ինչ տեսութեամբ իրեն չը վերագրեր տյս առաջարկը, ուստի թոյլ չնորհ ընէ յայտնել :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — (Ատենապետ Համարակալութեան Դիւանի) Այս առաջարկը զրամական խնդրոյ մը վրայ չէ, այլ ազգային կրթութեան կը վերաբերի, եւ իբր այն Համարակալութեան դիւանին չ'պատկանիր անոր նախաքննութիւնն, այլ Դաստիարակութեան դիւանին ձեռնհասութեան յատուկ է գործը : Ուստի կը կարծենք թէ այս Դիւանին պէտք է յղել առաջարկը :

Ժողովը կը հաւանի սոյն դիտողութեան եւ Պերպերեան էֆէնտիի առաջարկը կը ՅԳ.Է Դաստիարակութեան դիւանին ի նախաքննութիւն :

4.

Քաղաքական ժողովոյ նոր վարկի առաջարկը

Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր կողմէ ուղղեալ յետագայ յայտագիրը կարգացուցաւ :

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի Ազգային ժողովոյ

Ազգային վարչութիւնը կեդրոնական Մնտուկին ներկայ տարւոյ ելմտացոյցին մէջ պաշտօնէութեան թոշակին համար սահմանուած ամսական 15000 դրչ, ին բաշխումը կատարելու առթիւ՝ տեսնելով որ այս գումարը չհամապատասխաներ աշխատաւոր պաշտօնեայնէրը գոհ ընելու համար, Տնտեսական խորհրդոյ հետ համախորհուրդ՝ հարկ դատեց ամսական 5000 դրչ, յաւելուածական վարկ մ'առաջարկել Ազգային ժողովոյ :

Ուստի ըստ որոյման Քաղաքական ժողովոյ սոյն վարկի առաջարկը բերելով Պատկառելի ժողովոյդ՝ կը խնդրեմ որ բարեհաճիք շուտով անօրէնութիւն մ'ընել, որպէս զի կարելի լինի ամեն պաշտօնէից ամսականն որոշել եւ զանոնք գոհ ընել ըստ արժանւոյն :

2 Նոյ. 1879 Մնամք աղօթարար Պ. Կ Ներսես Արքեպիսկոպոս

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնէք որ Քաղ. ժողովն անբաւական կը համարի այն գումարը

զոր Ելմտացոյցը սահմանած էր Պատրիարքարանի պաշտօնէութեան համար, եւ երեք հազար զրշի նոր վարկ մը կը խնդրէ, ստիպողութիւն տալով խնդրոյն: Ինչ որ է ձեր կարծիքը, չնորհ ըրէք յայտնել, որ խնդիրն իւր լուծումը գտնէ:

ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ես կառաջարկեմ նախաձեռնով վերջացնել խնդիրը. ներկայ տարւոյս համար այս վարկի առաջարկը բոլորովին աւելորդ է ըստ իս, վասն զի արդէն քիչ ժամանակ մնացած է Սահմանադրական այս տարեշրջանին լրմանը եւ մեր քուէարկած ելմտացոյցը դեռ նոր գործադրութեան կսկսի դրուիլ, դաստիարակութեան պիտոյից համար գումար մը քուէարկուած է եւ դեռ եւս առաջին վճարք մ'անգամ չէ եղած այս հաշուոյն, նոյնպէս գաւառական այցելուաց համար որոշուած գումարն զեռ եւս երեք հարիւր զրշ միայն տրուած է, ուստի որ եւ է նոր փոփոխութիւն՝ պէտք է նոր տարւոյ ելմտացոյցին վերապահել, իսկ առ այժմ եթէ Վարչութիւնը չկրնար բաւականանալ սլաշտօնէից յատկացեալ գումարով, լաւագոյն է որ անոնցմէ աւելորդները արձակէ եւ արժանաւորները գոհացնէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն դուք նախաձեռնով մերժել կառաջարկէք Վարչութեան առաջարկը:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես թեր պիտի խօսիմ այդ առաջարկութեան: Վարչութիւնն 3000 զրշի նոր վարկ մը կը խնդրէ, ըսել է թէ ինք համոզուած է որ պէտք է այդ յաւելումն, եւ ստիպուած է դիմել՝ առ Ազգային ժողովն: Ես ալ իմօտոյ տեղեկութիւն ունիմ որ պաշտօնակալները, մանաւանդ ստորին պաշտօնեայք զո՞ չեն իրենց վճարուած թոշակէն, մինչդեռ՝ պէտք է որ իրենց աշխատութեան արժանի վարձքը կամ փոխարինութիւնն ստանան, որպէս զի իրենց պաշտօնը կարենան կատարել, ուստի աւելորդ կը զրտնեմ այս խնդիրն երկար վիճարանութեան նիւթ ընել, եւ կառաջարկեմ Վարչութեան առաջարկն ընդունել:

Հետեւապէս Ատենապետ Էֆէնտի խնդիրը քուէի կը դնէ եւ ժողովը 12 քուէի ընդդէմ 13 քուէով ԿՈՐՈՇԷ Վարչութեան վարկի առաջարկը նկատողութեան առնուլ եւ ՅԴԵԼ Համարակալութեան դիւանին ի նախաքըննութիւն յառաջիկայ նիստին իւր տեղեկագիրը բերելու պայմանաւ:

Յ.

Քաղաքական ժողովոյ առաջարկը կեդրոնական վարժարանի մասին

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քաղաքական ժողովոյ կողմէ կեդրոնական վարժարանի խնդրոյն վրայ յայտագիր մը կայ, որու հետ լծորդուած է նաեւ Ուսումնական խորհրդոյ մէկ տեղեկագիրն ու ծրագիրն: Այս ծրագիրն ընդարձակ գրութիւն մ'է, եւ չեմ կարծեր որ պէտք ունենանք զայն կարդալու, այլ կանցնենք ատենագրութեան մէջ. իսկ Քաղ. ժողովոյ յայտագիրն, եւ Ուսումնական խորհրդոյ տեղեկագիրն կը կարգանք, որ կը բաւեն մեզ խնդրոյն վրայ պէտք եղած լոյսը տրուելու:

Հետեւապէս նոյն կրկին գրութիւններն կարդացուեցան, որ հաւաքովի:

Յայտագիր Քաղ. ժողովոյ
Վսեմախոյլ Ատենապետ վաչա
Ազգային ժողովոյ

Ազգային ժողովը բարեհաճեցաւ ներկայ տարւոյ ելմտացոյցը վաւերացնելու առթիւ ընդունիլ դաստիարակութեան համար Վարչութեան կողմէ առաջարկուած 50000 զրշ. ի վարկն, և յանձնա-

բարել ընդ նմին Վարչութեան որ տեղեկագրէ թէ ինչ պէտքեր գոհացնելու պիտի ծառայէ յիշեալ գումարն:

Սոյն յանձնարարութեան համաձայն ֆաղաքական ժողովը Ուսումնական խորհրդոյ հետ համախորհուրդ որոշեց կեդր. վարժարանի բացման ծառայեցնել յիշեալ գումարն, այն վարժարանին՝ որոյ պէտքն ի վաղուց զգացուած և Ազգային ժողովէդ ևս ճանչցուած է, և որոյ շէնքն ալ արդէն պատրաստուած է ի Ղալաթիա: Այս նպատակաւ Ուսումնական խորհուրդը յիշեալ գումարին գործածութեան և կեդրոնական վարժարանին բացման համար ծրագիր մը պատրաստելու հրաւիրուելով, պէտք եղած ծրագիրը ներկայացուց յատուկ տեղեկագրով մը, զոր Քաղաքական ժողովն ընդունելով նոյնութեամբ կը ներկայէ Ազգային ժողովոյդ և կսպասէ Ձերդ հրահանգին ի պարտ ու պատշաճ գործադրութիւն:

Մնամք խորին յարգանք
ի դիմաց Քաղ. ժողովոյ
Ատենապետ Ատենապետ
Մ. Գ. Միսիսեմիսեան Ս. Մ. Պէյլիկեան
20 Հոկտ. 1879

Տեղեկագիր Ուսումնական խորհրդոյ

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր, Նախագահ Ազգային Քաղաքական ժողովոյ

Ուսումնական խորհուրդն Ազգային Վարչութեան վստահութեամբ պաշտօնի կոչուելէն անմիջապէս հետք իւր ուշագրութիւնը նուիրեց ազգային դաստիար-

ակութեան ամենէն ստիպողական պիտոյից: Ասոնցմէ առաջինն էր կեդրոնական վարժարանի մը հաստատութիւնը, որոյ պէտքն ի վաղուց զգացուած է, և ազգասէր անձանց օժանդակութիւնն ու աշխատութիւնն արդէն պատրաստած է շէնքն ի Ղալաթիա: Խորհուրդս պարտ համարեց այսպիսի կարելորդ ուսումնարանի մը բացումը փութացնել, և այս նպատակաւ հարկ տեսաւ նախ իւր պիւտճէն որոշել, ուստի իւր Յունիս 8 և 29 թուական նամակներով Վարչութեան դիմեց և խնդրեց որպէս զի պաշտօնական կերպիւ շնորհ ընէ ծանուցանել իրեն՝ դաստիարակութեան յատկացուցած գումարը: Վարչութիւնը կը պատասխանէր Յունիս 13 թուականաւ, ծանուցանելով թէ Ազգային ժողովը 50 հազար զրշի գումար մը յատկացուցեր է դաստիարակութեան պիւտճէին, և կը հրաւիրէր զմեզ որ այս գումարին գործածութեան և կեդրոնական վարժարանի բացման համար ծրագիր մը պատրաստելով ներկայացնենք:

Հետեւաբար պարտ համարեցինք յիշեալ ծրագիրը անյապաղ պատրաստել և պատիւ ունիմք այսօր Ձեր Սրբազնութեան ներկայել զայն:

Սոյն ծրագրէն կրնայ տեսնուիլ որ խորհուրդս վերոյիշեալ գումարին անբաւականութիւնը լեցնելու համար, ուրիշ եկամտից աղբիւրներ ևս նշանակած է, իսկ ասոնց բոլորին գործածութեան նրկատմամբ միայն ընդհանուր որոշումներ տուած է, թողլով որ իւր հսկողութեան ներքեւ հաստատելի մատակարար Հոգաբարձութիւնը կանոնաւոր հաշուակալութիւն մը բռնէ Ուսումնական խորհրդոյ

խնդրոց տեղեկագրերը, իսկ եթէ պատճառ մ'ունենան վերստին յետաձգելու, դէժ փութան զայն ծանուցանել: Այս միջադէպը գոցուած է, կանցնինք օրակարգին:

Օ Ր Ա Կ Ա Ր Ք

Խնդիր Այաթիոյ բաղեցուց. — Վիճաբանութիւն ի վերայ տեղեկագրի Մայր Դիւանի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կըյիչէք որ անցեալ նիստին վերջերք՝ Այաթիոյ խնդիրը վիճաբանութեան ենթարկուեցաւ, Մայր դիւանի տեղեկագրին վրայ, որու բովանդակութիւնը ձեզ հաղորդուած է արդէն: Այսօր պիտի շարունակուի դարձեալ սոյն խնդրոյն վիճաբանութիւնը, զոր անցեալ անգամ դեռ եւս խնդիրն իւր լուծման չյանգած, ստիպուեցանք ընդհատել, օրը տարածմամբ ըլլալուն պատճառաւ: Արդ՝ ատենախօսներն կը հրաւիրեմ խօսք առնուլ:

ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Անցեալ նիստին երբ վիճաբանութիւնն ընդհատեցաւ, այս խնդրոյն վրայ վերջին խօսքն իմն է, զոր պիտի շարունակեմ այժմ: Այաթիոյ թաղեցիք իրենց ընտրական իրաւանց վերադարձը խնդրած են: Մայր դիւանի տեղեկագիրը Այաթիոյ մէջ բնակող պանդուխտ ազգայիններն ի հաշիւ դնելով բաւական թուով ընտրող կը

գտնէ, եւ անոնց ընտրական իրաւունքը կը հաստատէ: Տեղեկագրին այս եզրակացութիւնը շատ իրաւացի է, սխալ է վերադարձնել թաղեցուց ընտրական իրաւունքը, զոր ուրիշ աւելի նուազ ընտրող ունեցող թաղեր կը վայելեն: Բայց կէտ մը կայ՝ որ ոչ շարութեան արժանի է: Տեղեկագիրը գաւառացուց համար ընտրութեան պայման մը նշանակելով կը պահանջէ որ տարիէ մ'ի վեր Պօլիս բնակող եւ ազգային տրոց մասնակցողները միայն կարենան քուէարկութեան մասնակցել, գաւառացի ազգայնոց տրոց մասնակցութեան խնդիրը հին է, եւ այս մասին արդէն հարցում մ'ըրած եմ ես, որ Սրակարգըն է: Արդէն առաջադրուող Պօլսյ մէջ զբոսնող գաւառացիք ազգային տուրք կը վճարեն, մանաւանդ երբ գործով Պատրիարքարան երթան: Իրաւունք եւ պարտիք դուզնութաց են, պարտուց կատարումը պահանջել եւ տուրք գանձել, իսկ իրաւունքը զլանալ, եւ ընտրութեանց ատեն՝ իրաց մերժել դուն գաւառացի ես ըսելով, համաձայն չէ արդարութեան. ուստի ինչ որ Այաթիոյ պանդուխտ ազգայնոց համար կորուստի, նոյնը Պօլսոյ մէջ գտնուող բոլոր գաւառացուց ալ պէտք է տալ, զի անխրուութիւն պիտի լինէր ուրիշ կերպով տնօրինել . . .

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — (Ընդմիջելով) Մայր դիւանի տեղեկագրին չէ թէ միայն Այաթիոյ մէջ բնակող գաւառացուց, այլ Պօլսոյ մէջ գտնուող համայն պանդուխտ ազգայնոց կընծայէ ընտրութեան իրաւունքը:

ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — (Շարունակելով) Շատ աղէկ, մինչեւ ցարդ այդ իրաւունքը զլացուած էր ամենուն, օւրեմն պէտք է որ այժմ ընդհանուրին համար ըլլայ մեր որոշումը: Չկրցի հասկնալ սակայն թէ ինչ. . . Գաւառացուցներն անցեալ նիստին կըսէր չեղտելով թէ գաւառացի ազգայնոց ընտրութեան իրաւունք ընծայելը պանդուխտութիւնը Պօլսոյ մէջ քաջալերել է. այս խօսքին նշանակութիւնն ինչպէս անցեալ անգամ ալ ըսի:

չեմ կարծեր որ նոյն իսկ Գաւառացուցներն էֆէնտին ալ հասկցած լինի: Երբ խնդիրը գաւառացուց պանդուխտութեան վրայ եղած ըլլար, ես կը յուսայի Գաւառացուցներն էֆէնտին որ ըսեր՝ թէ պէտք է բառնանք հարստահարութիւններն, որպէս զի պանդուխտութեան առաջին տնուի. սակայն Գաւառացուցներն էֆէնտին հարստահարութեանց տեղ՝ անոնց քուէարկութեան իրաւունքը կը ջնջէ, պանդուխտութիւնն արդիւնքու համար: Աւրիշ խընդիր մ'ալ, Այաթիոյ մէջ վարժարան մը կայ իւր կալուածներով: Այս վարժարանը հոնքութեան օգտին ծառայեցնել կուղին, կեդրոնական վարժարան մ'ընելով զայն:

Այս պարագային մէջ կընդունիմ ես որ վարչութիւնն իրաւունք ունի, այդ վարժարանին հոգն տեսնելու, բայց եթէ չկարենայ այդ ձեռնարկը յառաջ տանել, թաղեցիք իրաւունք կունենան միջամտելու, եւ վարչութիւնէն պահանջելու որ իրենց յանձնուի այդ վարժարանին հոգը: Այս կէտերը այժմէն պէտք է պարզել, որ շիոթութիւններ չյառնին ազգային մէջ, կեդրակացնեմ խօսքս եւ կառավարիմ որ Մայր դիւանի տեղեկագրին ամբողջապէս ընդունուի, իրաւունք տրուելով ոչ միայն Այաթիոյ՝ այլ եւ Պօլսոյ թաղերու մէջ բնակող պանդուխտ ազգայնոց՝ ընտրութեանց մասնակցելու:

ՄԵՐԵՆԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Նախընթաց նիստին այս խնդիրը յուզուած ատեն բարեփոխում մ'առաջարկեցի Մայր դիւանի տեղեկագրին վրայ. դո՛ւ եմ տեսնելով որ այս բարեփոխման մէկ գլխաւոր իմաստն, այն է Այաթիոյ կեդրոնական վարժարանին եւ անոր յատկացեալ կալուածոց կեդրոնական սեփականութիւն ճանչցուիլն, ընդունելութիւն գտնել կսկսի, եւ Ալիքսանեան էֆէնտին ալ զայն կը հաստատէ, ինչպէս կըմբռնեմ իւր խօսքերէն: Բայց մէկ կէտի վրայ կը տարբերինք: Ալիքսանեան էֆէնտին կուզէ որ Պօլսո գտնուող պանդուխտ ազգայնոց համար ընտրական իրաւանց խնդիրն ընդհանուր կերպիւ լուծուի որոշուի միանգամ: Ես այդ խնդրոյն կարեւորութիւնը ճանչելով հանդերձ՝ չեմ ու-

ղեր այժմ շատ յառաջ երթալ եւ բուն խնդրոյն նիւթէն հեռանալով սկզբան խնդիր մը յուղել, այլ կը փախաքիմ որ առանձինն ուշադրութեան նիւթ ըլլայ այն, եւ իւր լուծումն ստանայ: Ուստի իմ խօսքս Այաթիո թաղին ընտրական իրաւանց եւ անոր յարակից պարագաներուն վրայ կամփոփեմ, վասն զի Այաթիո միւս թաղերուն նկատմամբ բացառիկ կացութիւն մ'ունի զանազան պարագաներով, եւ կարծէ որ ձեր մասնաւոր ուշադրութեան առարկայ լինի:

Ուրեմն ես իմ բարեփոխումն աւելի ճշդելով եւ չորս յօդուածներու բաժանեալ խըմբագրելով կը ներկայացնեմ աւասիկ, եւ կը խնդրեմ որ ժողովք այս յօդուածները քուէարկէ: Եւ ըստ այնմ շրջահայեաց նախատեսութեամբ որոշում տայ Այաթիոյ խնդրոյն, որ թերեւս մինչեւ ցարդ միշտ շիոթ վիճակի մէջ ներկայացած ըլլալուն համար չէ կրցած իւր լուծումն ընդունիլ:

Ա. Այաթիոյ կեդրոնական վարժարանին շէնքն և անոր յատկացեալ կալուածներն ազգային կեդրոնական սեպհականութիւն են, և անոնց մատակարարութիւնն ազգային վարչութեան կը վերաբերի:

Բ. Այաթիոյ թաղ. խորհրդին պարտաւորութիւնն է՝ իւր թաղի վարժարաններուն ծախքը հոգալ իւր եկեղեցւոյն սովորական հասոյթէն:

Եթէ արդի հասոյթն անբաւական համարուի, կալուածոց հասոյթէն առժամանակեայ կերպիւ նպաստի գումար մը կը սահմանուի:

Գ. Այաթիոյ թաղեցուց իրենց թաղական խորհուրդն ընտրելու իրաւունքն, որ առժամանակեայ կերպիւ դադրած էր վարչական տնօրինութեամբ, այս թուականէն իրենց կը վերադառնայ:

Դ. Այն ամէն գաւառացի որ Այաթիոյ կը բնակի և դէժ տարի մ'առաջ

մասնակցած է թաղային տրոց, ընտրուելով թեան և ընտրելով թեան իրաւունք կը վայելէ, բնիկ Ղալաթիացւոց պէս, ըստ տրամադրութեան Սղղային Սահմանադրութեան:

Բայց քուէարկութեան առաջին անգամուն՝ դէժ տարի մ'առաջ թաղային տրոց մասնակցած ըլլալու պայմանին բացառութեամբ, իւրաքանչիւրոյն ազգային տուրքը Ղալաթիոյ մէջ կանխաւ ստորագրած ըլլալու պայմանը կը գործադրուի անոր տեղ:

Այս բարեփոխումը ներկայելէ ետեւ՝ քանի մը խօսք ընել կուզեմ, բացատրելու համար թէ ինչ խորհրդածութեամբ այս յօդուածոց մէջ ամփոփած եմ իմ կարծիքներս:

Ղալաթիոյ թաղը միւս թաղերուն պէս իւր ընտրական իրաւունքն ի գործ կը դնէր ի սկզբան և իւր Թագ խորհուրդն ինք կը նստրէր: Այս իրաւունքն ի վերջէ վարչական որոշմամբ դադրէր է առժամանակեայ կերպիւ, Վարչութեան կողմէ կարգուեր է Ղալաթիոյ Թագ խորհուրդն, և բաւական տարիներէ հետէ քանի մ'անգամ նորոգուելով շարունակել էր է ցայսօր: Պէտք է ենթադրել որ Վարչութիւնն օրինաւոր պատճառներ ունեցեր է այնպէս ընելու, և քննել միայն որ երբ Ղալաթիացիք իրենց ընտրական իրաւանց վերագործը կը պահանջեն՝ զայն զլանալու պատճառ կ'սյ արդեօք: Պատճառ չկայ Ղալաթիացւոց ըսելու թէ՛ իրենց Թագ խորհուրդն ընտրելու իրաւունք չունին: Նկատելի է միայն որ Ղալաթիացւոց ընտրական իրաւանց դադարման պահուն՝ կարեւոր փոփոխութիւնք տեղի ունեցիր և Ղալաթիոյ կալուածոց նկատմամբ, կեդրոնական վարժարան անուամբ չէնք մը կառուցուեր է հոն, և Ղալաթիոյ կալուածոց հասոյթն անոր յատկացուելով, յօգուտ հանրութեան բարձրագոյն ուսումնք աւանդելու սահմանուեր է այն. և այս անօրինութիւնն Ազգ. ժողովոյս բովին անցնելով՝ օրինաց ոյժ ստացեր է: Սրք երբ Ազգ. ժողովք, առանց այս կարեւոր պարագան ինկատի առնու, ո-

րոշէ վերագործել Ղալաթիացւոց ընտրական իրաւունքն, ինչպէս որ արդար է վերագործնել, մի՛ գուցէ Ղալաթիացին սպազային մէջ թիւր բարձրմամբ իրաւասութեան պահանջում մը յարուցանէ այդ վարժարանին և կալուածոց վրայ, և նիթագրելով թէ անոնք թաղային սեպականութիւնն են և հետեւաբար թաղին կը վերաբերին, և կամ գէթ մասնակի կերպիւ թաղին մանկուոյն դաստիարակութեանն յատուկ են, և շն. մինչդեռ ելած են նոքա մասնաւորութենէ և ընդհանուրին յատկացեալ: Ապագային մէջ այսպիսի թիւրիմացութեան և շփոթութեան տեղի չթողելու համար կը մտածեմ որ Ղալաթիացւոց ընտրական իրաւանց վերագործն որոշելէ առաջ. որ բարեփոխմանս երրորդ յօդուածին մէջ կ'ամփոփի, նախ անոր ստացին և երկրորդ յօդուածները քուէարկէ ժողովք, որոց մին կեդրոնական վարժարանին և անոր յատկացեալ կալուածոց թաղային սեպականութենէ դադրելին կը հաստատէ, և միւսը՝ Ղալաթիոյ թաղային վարժարանաց իւր եկեղեցւոյն հասոյթներէն հոգացուիլը կը տրամադրէ:

Կրնան խորհիլ ոմանք թէ Ղալաթիոյ կալուածներն իւր ձեռքէն առնուլ և կեդրոնին յատկացնելն արդարութեան համաձայն չըլլայ, և կամ օր մ'ուրիշ թաղերն ալ իրենց կալուածներէն զրկելու նախընթաց մը ընծայէ: Այսպէս խորհողներուն կուզեմ յիշեցնել որ, եթէ ճիշդ ալ ըլլայ իրենց խորհուրդն, այդ անօրինութիւնը մենք չպիտի ընեմք այսօր, այլ կանխաւ եղած է այն Ազգային ժողովոյս որոշմամբ: Դիտել կուտամ նաև որ կեդրոնական վարժարանին կառուցումն ու Ղալաթիոյ կալուածոց բարգաւաճումն այն միջոցին տեղի ունեցած են, յորում Ղալաթիացին դադրած էր իւր ընտրական իրաւունքը գործադրելէ, և ներկայ վիճակն արտադրելու համար ամեն կողմէ եղած զոհողութեանց շարժառիթն ըստ ամենայն հաւանականութեան՝ ոչ այլ ինչ եղած է, այլ միայն հանրութեան օգտին ծառայող գործի մ'առաջադրութիւնն ու ակնկալութիւնը: Նա մանաւանդ՝ ինչպէս Ղալաթիոյ վիճակին ի թօտոյ ծանօթ եղողները

բաժ գիտեն, եկեղեցւոյն հասոյթը չգոյանար զլիսաւորաբար իւր բնիկ ժողովրդէն. ինչպէս կը գոյանան միւս եկեղեցւոց հասոյթներն: Ղալաթիոյ եկեղեցւոյ հասոյթն երկու գլխաւոր աղբիւր ունի, մին է՝ Պօլսոյ արուարձանաց ընդհանուր աղբայինք, որք ուխտագնացութեամբ կը յաճախեն հոն ամեն հինգշաբթի, և միւսը՝ պանդուխտ գաւառացիք, որք բաղձաթիւ են Ղալաթիոյ մէջ և շարունակ այն եկեղեցին կը զխնեն: Կը տեսնէք ուրեմն որ այս նկատմամբ ալ զրկանք չկայ Ղալաթիացւոյն, երբ ընդհանուրէն գոյացեալ սեպականութեանց արդիւնքն ընդհանուրին օգտին կը յատկացուի: Հետեւապէս ամեն տեսակէտով արժան է որ իմ բարեփոխմանս առաջին երկու յօդուածները քուէարկուին նախ, և սպա Ղալաթիացւոց ընտրական իրաւունքն իրենց վերագործնել որոշուի:

Եւ ըստ որում Ղալաթիոյ եկեղեցւոյն ժողովրդեան մէջ պանդուխտ աղբայինք մեծ մաս կը կազմեն, ինչպէս Մայր դիւանի տեղեկագիրն ալ կը զիտէ, հարկ կըլլայ անոնց ընտրական իրաւանց մասնակցութեան սահմանն ալ որոշել, և երբ անցելոյն վրայ սկսեալ մը նետենք և զիտենք որ Ղալաթիոյ ընտրական խնդիրը գաւառացի ազգայնոց մասնակցութեան պահանջումէն ծագում առած և նախկին անօրինութեանց տեղի տրուած է, այս հարկն աւելի զգալի կըլլայ:

Մայր դիւանի տեղեկագիրն գաւառացւոց մասնակցութեան համար երկու պայման կառաջարկէ. Ղալաթիոյ մէջ տեւական բնակութիւն հաստատած ըլլալ և տրոց մասնակցիլ՝ Սոսիցին պայմանն անբաւական կը թուի ինձ, զի գործնական չէ. մտածեցէք միանգամ թէ ինչպէս կարելի է ստուգել իրաքանչիւր գաւառացւոց բնակութեան տեւական կամ ժամանակաւոր լինելը: Երբ այս կամ այն գաւառացւոյն ընտրական իրաւանց վրայ ինդիր ծագի, ինչ տեսակ փաստ և ապացոյց պիտի փնտռենք անոր բնակութեան բնութիւնն ըստուգելու համար: Եւ ինչ հարկ այն դժուարութեանց մէջ դեղերիլ, քանի որ վերջապէս զեղծման և անիրաւութեանց դէմ ապահովութիւն չպիտի ընծայէ մեր պայմանը, վասն

զի որքան ալ արդարութեան համաձայն լինի տեսական կերպիւ, գործնականին մէջ հակառակ արդիւնք պիտի արտադրէ:

Իսկ եթէ այն պայմանն ի բաց թողլով միայն տրոց մասնակցութեան պայմանն առնուեք, ուրիշ տեսակ զեղծում մ'ալ և թեւեւս փտանգ մ'ալ անկից պիտի ծագի, եթէ այդ մասնակցութեան համար ժամանակի նախընթաց միջոց մը չորոշուեք, այսինքն եթէ գոնէ տարի մ'առաջ մասնակցած լինելը պայման չդնենք, Կրնան պատահիլ այնպիսի պարագաներ, յորում խռովայոյղ անձ մ'ուզելով խնդիր հանել թաղին մէջ, կերթայ պանդուխտ աղբայնոց մէկ մասին բարեմտութիւնը կը պատրէ, և քուէարկութեան նախընթաց օրը կը զրկէ զանոնք տրոց բաժիննին վճարելու, կամ ի հարկին ինքն իւր քսակէն կը վճարէ նոցա տրոց բաժիններն, և խել մը միամիտներն իւր ապօրէն նպատակին գործիք կընէ, թաղին մէջ վէճ մը, պայքար մը բանալու համար: Եւ զիտէք ամենքդ ալ որ թաղային խնդիրներն ընդհանրապէս աննշան շարժառիթ մը կուենան, բայց ստէպ անվերջանալի կընուեն կը յարուցանեն թաղեցոց մէջ, Վարչութիւնն ընդերկար կզբաղեցնեն և երբեմն անդորմանելի վիճակներ ալ կը պատճառեն: Չեմ ուզեր ըսել թէ Ղալաթիոյ մէջ այսպէս պիտի լինի անպատճառ, այլ ըստ որում կարելի է որ օր մ'այսպիսի դէպք մը պատահի, հաւանականութեան դէմ նախատեսութեամբ շարժած ըլլալու համար՝ անհրաժեշտ կը տեսնեմ որ քուէարկութեան թուականէն դէժ տարի մ'առաջ տրոց մասնակցած ըլլալու պայմանը գրուի, և այն ատեն Ղալաթիոյ մէջ բնակութիւն հաստատած ըլլալը բաւական համարուի, որով միանգամայն ստուգելն եթէ ոչ անկարելի գոնէ կարի դժուարին եղող պարագայէ մ'ալ խոյս տուած կըլլամք: Բայց որովհետեւ այս պայմանին գործադրութիւնը առաջին անգամ արդեւ կը դառնայ գաւառացւոց ամենամեծագոյն մասին ընտրութեան մասնակցելուն, և ստի առաջին անգամու համար միայն բացառութիւն ընել պատշաճ տեսած եմ:

Աւասիկ այս տեսութեամբ խմբագրուած է իմ բարեփոխումս, զոր ձեռք խմատութեանը յանձնարարելով, խօսքս կը վերջացընեմ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Գոհ եմ մեծապէս որ Մայր դիւանն իւր քննութեան տեղեկագրով եւ Մէրեէմ-Գուլի էֆէնտին իւր ներկայացուցած բարեփոխմանց գրոյն եւ տուած բացատրութեանց մէջ՝ լին մտնար յիշատակելու թէ Ղալաթիոյ թաղեցւոց ընտրական իրաւունքը Վարչութեան մէկ անօրէնութեամբը դատարած էր եւ այս յայտարարութեամբ կը հաստատեն թէ այս իրողութիւնն մասնաւոր անձի մը քմահաճութեան արդիւնքը չէ եղեր, այլ որոշումն մը ծագում առած է, որոշում հեղինակն է նոյն ինքն Վարչութիւնը: Կը յիշեմ որ 1863 թուականին մինչդեռ առաջին անգամ թաղական ընտրութիւնները կը կատարուէին, Ղալաթիոյ մէջ բնակող սլանդուխտ գաւառացիք ուղեցին ընտրութեան մասնակցի, Սահմանադրութիւնը կը արամադրէ որ Քաղ. խորհուրդներն իրենց թաղին Եկեղեցւոյն ժողովրդեան կողմէ ընտրուէին, Գործադիր Յանձնաժողովը այն ժամանակի բերմանց համաձայն չուզեց որ այս տեսակ խնդիրներ յարուցուին, եւ համոզեց բողոքարկու գաւառացիներն որ իրենց պահանջումն ետ կենան, եւ ընտրական իրաւունքը նոյն թաղին սակաւաթիւ բնակիչներուն տրուի. գաւառացին հաճեցաւ, եւ ըստ այսմ Քաղ. խորհուրդն կազմուեցաւ այն ատեն, իր մէջ ունենալով նաեւ քանի մը գաւառացիներ: Բայց փորձը հաստատեց վերջապէս որ այս եղանակը չի պիտի կրնար տեւական ըլլալ, թաղին բնակիչներն դժբաղդաբար այն թիւը կարծիքն ունեցան թէ թաղային ամէն իրաւունք իրենցն է անկապտելի կերպով, եւ գաւառացի աղաւթներ չունին որ եւ է գործի մասնակցութեան եւ միջամտութեան իրաւունք մը, ուստի խնդիրն արձարծեցաւ նորէն, եւ սլանդուխտ ժողովուրդը Վարչութեան դիմելով վերստին իրաւունք պահանջեց: Վարչութիւնը տեսնելով որ ծանր վէճերու եւ կրկնպառակութեանց նիւթ մ'է այս խնդիրը, բա-

լորովին խափանեց թաղին ընտրական իրաւունքը, եւ իւր հեղինակութեան վերապահելով զայն, իւր կողմէ առժամանակեայ Քաղական խորհուրդ մը կազմեց բնիկ եւ գաւառացի անդերէն խառն ընտրութեամբ, եւ այսպէս վերջ տուաւ վէճերուն պինդ բռնելով իւր որոշումն, ամեն անգամ որ բնիկներէն պահանջումները նորոգուեցան, Իրողութիւնն այս էր, որու վրայ Մայր դիւանն տեղեկագրըն ալ յիշատակութիւններ կընէ, սակայն ամեն անգամ որ թաղին կողմէ խնդիր յուղուէր, զիս կը մեղադրէին, կը դատաւիտէին իբրեւ սպառնալիս կամ հեղինակ ընտրական իրաւունց խափանման, եւ ահաւասիկ ժամանակն եկաւ գործին իսկութիւնը պարզեց: Լիմա որ թաղին պիտի վերադառնայ ընտրական իրաւունքն, պանդուխտ գաւառացւոց մասնակցութեամբը Ղալաթիոյ ընտրական խորհուրդին այլ եւս կը վերջանայ, իսկ այն սլանդունը, զոր գաւառացւոց ընտրողութեան իրաւունց կը լծորդեն թէ Մայր դիւանն եւ թէ Մէրեէմ-Գուլի էֆէնտին բարեփոխումը, թէ ընտրողը մէկ տարի յառաջ բնակութիւն հաստատած եւ իրենց տուրքը նոյն թաղին մէջն վճարած ըլլան, բանաւոր է եւ յոյժ կարեւոր. անոր սկզբունքը նոյն իսկ Տէրութեան ասկէ առաջ հրատարակած Սահմանադրութեան մէջ արամադրեալ է, եւ ինձ կը թուի թէ անհրաժեշտ է, ոչ միայն գաւառացի, այլ առհասարակ բոլոր թաղերու ընտրողաց համար, եւ հաւանական անտեղութեանց դէմ՝ իբր թուժք մը կրնայ ծառայել: Օրինակաւ մ'ընեմ, կրնայ պատահիլ որ թաղական ընտրութեանց վէճերու ատեն կուսակցութիւն մը գորացնելու համար ուրիշ թաղէ անձեր առժամանակեայ տեղափոխութիւն մ'ընեն, քանի մը սենեակ վարձելով բնակութիւն հաստատեն, եւ միջամտեն թաղային գործոց: Ահաւասիկ այդ սլանդունը այսպիսի դիտաւորութիւններն կը ջնջէ: Գանք կեդր. վարժարանին խնդրոյն, Ղալաթիոյ Եկեղեցւոյն հասոյթին երկու աղբիւրէ կը բղխի գլխաւորաբար, ինչպէս դիտել տուաւ Մէրեէմ-Գուլի էֆէնտին, այն է ուխտաւորաց եւ գաւառացւոց բարեպաշտական նուէրներէն: Այս արդեանց օրն

միւսին վրայ առաւելութիւն ունի քանակութեամբ, ճշգրտ չէ հասկցուած, բայց գրեթէ իրարու հաւասար կը համարուին: Երբ այս տեղ Սղգը կեդր. վարժարանը հաստատէ, ուսուցատանն ու արդիւնքը հանրական է, ոչ ոք կրնայ այս հաստատութեան դէմ սուրկութիւն յարուցանել եւ մասնաւոր սեպականութեան խնդիր յուղել: Ինչպէս որ ոչ ոք զիտողութիւն ըրաւ, երբ Ղալաթիոյ նորակառոյց շէնքին ճակատը՝ կեդր. վարժարանին առեւտը վիճաբանուակ դրոշմուեցաւ, ոչ ոք զիտողութիւն ըրաւ, երբ կալուածոց համար ուրոյն շոգարարութիւնը կազմուեցաւ, վասն զի այդ կեդր. վարժարանէն նոյն իսկ Ղալաթիացին եւս սլանդ օգտի, բայց ի հարկէ՝ զիտողութիւն կրնան ընել Ղալաթիոյ թաղեցիք երբ այդ վարժարանը չկրնայ բացուիլ, կամ չը շարունակէ, եւ կամ կալուածները ըստ արժանւոյն չմատակարարուին: Ինչպէս թաղեցւոց թաղային անտակին մատակարարութեան վրայ Վարչութիւնը քօնթրօլ մ'է, այնպէս ալ երբ Վարչութիւնը կալուածն ու վարժարանը կը մատակարարէ, Ղալաթիոյ թաղային ընտրողք քօնթրօլ են Վարչութեան արարքին, եւ ի հարկին մինչեւ իսկ բողոքելու իրաւունք ունին առ Ազգ. ժողովն:

ՄԵՐԵՆԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — (Ընդմիջելով) Իբրեւ ընդհանուր ազգայնոց իրաւունք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. (Շարունակելով) Այս բացատրութիւնները տալով կեդրակացնեմ խօսքս եւ կառաջարկեմ ընդունել Մէրեէմ-Գուլի էֆէնտին բարեփոխումը Մայր դիւանի տեղեկագրին վրայ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Լսեցինք Մէրեէմ-Գուլի էֆէնտին առաջարկած բարեփոխումներն, որոց փախաղեան էֆէնտին ալ յարեց քօնթրօլի վերաբերեալ մասն: Այս օմներ պէտք է գրով աւանդուին, եւ Մէրեէմ-Գուլի էֆէնտին բարեփոխմանց հետ լծորդուելով քուէի գրուին. եթէ ոչ՝ լոկ յայտարարութեամբ՝ երեսփոխանի մ'անձնական կարծիքները կը համարուին միայն, եւ որոշման կարգ չեն կրնար անցնիլ:

ՔԱՓԱՄԱՋԵԱՆ Մ. ԷՖ. — Խօսք կուզեմ Ալեքսանեան էֆէնտին պատասխանելու համար, որ իմ բացակայութեանս քննադատեր է խօսքերս:

ՋԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդիրը քուէարկելու կէտին հասած ենք, զի վիճաբանութիւնը փակուած է, ուստի աւելորդ է կարծեմ, Քափամաճեան էֆէնտին, եղած վիճաբանութեանց վերադառնալ:

Եւ հետեւապէս Ատենապետ էֆէնտին խնդիրը երկուքի բաժնելով քուէի կը դնէ, եւ ժողովը միաձայն կ'ընդունի Ղալաթիոյ խնդրոյն վրայ Մայր դիւանին մատուցած տեղեկագրին եղբակացութիւնն, Մէրեէմ-Գուլի էֆէնտին բարեփոխմանց հետ, եւ ըստ բացատրութեան փախաղեան էֆէնտին: Իսկ ընդհանուր կերպով սլանդուխտ աղաւթնոց ընտրողութեան եւ ընտրելիութեան իրաւունց խնդիրն ուրոյն նկատողութեան առնուել կ'ընտրուի:

Առաջարկութիւն Նախագահ Սրբազան Հօր Խարբերքի Երեսփոխանական ընտրութեան մասին:

ՆԱԽԱԳԱՋ ՍՐԲԱԶԱՆ. — Ատենին փակումէն առաջ ձեզ ներկայելու խնդիր մ'ունիմ, եւ կը յուսամ որ կը հաճիք ունկնդրութիւն ընծայել ինձ: Ասկէ առաջ՝ երբ ես բացակայ կը գտնուէի ժողովիդ նիստերէն, Խարբերող գաւառին Երեսփոխանական ընտրութեան տեղեկագրերը ներկայացրէ է ձեզ, բայց ընտրութիւնը չէք հաճեր վաւերացնել, առարկելով թէ ընտրեալ Երեսփոխանն անպատուած է այս ժողովն, եւ հետեւաբար անարժան է նա Երեսփոխանական արժողին վրայ բազմելու: Այդ անձն է Լրագրոյ հրատարա-

կիչ նիկողոս էֆէնտի Թիւլպէնտեան, որ ինձ գիմելով այս անգամ՝ գրաւոր բացատրութիւն տուած եւ յայտարարած է թէ ինք այս ժողովին վեհութիւնը կը ճանչնայ, թէ զայն բնաւ անպատուած չէ, այլ ընդհակառակն զայն Ազգին ներկայացուցիչը նկատելով կատարեալ յարգանք եւ պատկառանք կըզայ անոր նըկատմամբ։ Աւրիչ անձեր ալ ի նպաստ Թիւլպէնտեան էֆէնտի միջնորդելով իմ միջամտութիւնս խնդրած են, որպէս զի բարեխօսեան ժողովոյդ առջեւ, որ այս խնդիրը գոցէ, եւ հաճի վաւերել Թիւլպէնտեան էֆէնտի ընտրութիւնն, ուստի այսօր կը խնդրեմ որ ժողովը շնորհ ընէ ներողամբտ գանուի։

Արդէն ուրիշ շատ պարագայից մէջ միշտ ներողամտութեան ոգով շարժած է, երբ անպատուիչ խօսքեր ուղղուած են իրեն դէմ, կը յիշեմ որ հանգուցեալ երեսփոխան մը ոչ նուազ նախատինքներ ըրաւ, եւ պնդեց իսկ ցվերջ իւր խօսքերն ետ չառնելու համար, սակայն ներուեցաւ իրեն. կը յուսամ որ այս պարագային մէջ ալ մի եւ նոյն ներողութեան ոգին ցոյց կուտաք այն անձին դէմ, որ այսօր իւր ստորագրութեան ներքեւ իւր մեծարանքը կը յայտնէ ժողովիդ նկատմամբ, եւ այս բաւական հատուցում մը համարեցէք։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սրբազան Հայր, արդէն Թիւլպէնտեան էֆէնտի այս մասին խընդրագիր մատուցած էր, զոր ժողովը նախաձեռնութեան դիւանին յղած է ի նախաքննութիւն։ Այժմ որ Ձեր Սրբազնութիւնը միջամտելով ներողութիւն կառաջարկէ, կարճանադրուի Ձեր Սրբազնութեան այս կամքն, եւ ի վերջէ ժողովը կը տնօրինէ զարժանն։

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Ես վիճարանութեան ենթարկելու համար այս առաջարկութիւնը չըրի ձեզ, այլ խնդրեցի պարզապէս որ ներէք։

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Ե. ԷՖ. — (Ատենապետ նախաձեռնութեան դիւանին) Ես որ եւ է դիտողութիւն չի պիտի ընեմ Սրբազան նախագահ Հօր առաջարկութեան մասին, որ այս

խնդիրը ներողամտութեամբ վերջացնել կը բաղձայ, այլ իբրեւ Ատենապետ նախաձեռնութեան դիւանին բան մը գիտնալու պէտք ունիմ։ Ժողովը նախորդ որոշում մ'ունի այս խնդրոյն վրայ, որու նկատմամբ Թիւլպէնտեան էֆէնտի մատուցած խնդրագիրը նախաձեռնութեան դիւանին յղուած է։ Խընդիրն արդէն դժբաղդ խնդիր մ'ըլլալով նախաձեռնութեան դիւանն ուրիշ ամեն խնդիրներէ աւելի անով զբաղելու հարկադրած է, եւ վերջապէս աւարտելով իւր աշխատութիւնը՝ պատրաստած է իւր տեղեկագիրը. զոր այսօր պիտի կրնայի բերել, եթէ քանի մ'օրէ ի վեր օդին խստութեան պատճառաւ արգիլուած չըլլայի Մեծ կղզին, բնակարանս երթալէ։ Այժմ կուզեմ գիտնալ որ Սրբազան նախագահ Հօր այս առաջարկութեանէն ետեւ՝ այլ եւս պէտք ունի՞ ժողովը այդ տեղեկագիրն։

ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Կառաջարկեմ տեղեկագիրն դառն սպասել եւ այնուհետեւ տնօրինել ներման խնդիրը, զոր Սրբազան նախագահն առաջարկեց։

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Ես միշտ սովորեմ ներել, ինչպէս ներած եմ շատերուն։

Այս պահուս նորին Սրբազնութիւնը կը մեկնի Խորհրդարանէն, եւ օրն արդէն տարածամած լինելուն՝ կը փակուի տառանք ժամ 10ին, յաջորդ նիստն երեք շաբաթէն դուրս մարելու որոշմամբ։

Ատենաղայիր Ատենապետ
Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ Տ. ԵՈՒՍՈՒՅԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐԾՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Տ.	Մկրտիչ	Ս.	Ար.բեպո.	Խրիմեան	Ա.	Ա.բեռնապետ
2	Տ.	Խորէն	Ս.	»	Նար-պէ		
3	Տ.	Կարապետ	Ս.	Եպո.	Սերովբեան		
4	Տ.	Մատթէոս	Ս.	»	Իզմիրլեան	Բ.	Ա.բեռնապետ
5	Տ.	Ամբրոսիոս	Ծ.	Վրդ.	Ռուբինեան		
6	Տ.	Գարեգին	Ծ.	»	Թաթարեան		
7	Տ.	Ներսէս	Ծ.	»	Ասլանեան		
8	Տ.	Պօղոս	Ծ.	»	Խօլտամեան		
9	Տ.	Արիստակէս	Աւագ	Քհն.	Մամբրէեան		
10	Տ.	Խորէն	»	»	Փէհլիվանեան	Բ.	Ա.բեռնապետ
1	1Տ.	Սահակ	»	»	Տ. Սարգիսեան	Ա.	Ա.բեռնապետ

ՔՈՂԱՔԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Առաքել էֆէնտի	Ալթուն Տիւրրի	Ա.	Ա.բեռնապետ
2	Գէորգ	» Գըլըճեան		
3	Գարբիէլ	» Եսաեան		
4	Լօղօֆէթ	» Պալեօղեան		
5	Մարտիրոս	» Միւհէնտիսեան		
6	Մկրտիչ	» Ֆրէնկեան		
7	Յակոբ	» Զօպսնեան		
8	Սահակ	» Ղաղարոսեան		
9	Ստեփան	» Պէլիկճեան	Բ.	Ա.բեռնապետ
10	Խաչատուր Խան	Տ. Ներսիսեան		

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. Վաւերացումն ժԱ. նիստի ատենագրութեան .
2. Բացակայութիւն երեսփոխանաց .
3. Համարակալութեան Դիւանի գիտողութիւնը երեսփոխան Ռ. Պէրուլէրեան էֆէնտիի առաջարկութեան մասին .
4. Քաղաքական ժողովոյ նոր վարկի առաջարկը .
5. Քաղաքական ժողովոյ առաջարկը կեդրոնական վարժարանի մասին .
6. Նախաքննութեան յանձնուած փնդրոց վիճակը .

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Խնդիր Ղալաթիոյ թաղեցւոց . — վիճարանութիւն ի վերայ տեղեկագրի Մայր դիւանի :

Առաջարկութիւն Նախագահ Սրբազան Հօր Խարըերդի երեսփոխանական ընտրութեան մասին :

Գիւն 2 դրոշ

ՍԵՓԷԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ՅԱՍԿԱՅԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի Է. Ղալաթիոյ Ս. Լուսաւո իջ եկեղեցւոյ բանկալը Է. Հայ գրավաճառաց քով